ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 03.02.01-63

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան

31.01.2022թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝ Վ. Գասպարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու) մի կողմից և «Արմավիրի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ը, ի դեմս հաստատության տնօրենի պարտականությունները կատարող Ա. Խաչատրյանի, ով գործում է հաստատության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է իրականացնել «Միջին մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում» ծրագրի շրջանակներում «Արմավիրի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ի միջին տարեկան 95 սովորողների (առանց ընդունելության) ուսուցումը,ինչպես նաև ՀՀ օրենքներով սահմանված ուսման վճարի փոխհատուցում (լրիվ կամ մասնակի (զեղչ)) ունեցող թվով 17 ուսանողներին, որից՝ ընտանիքի անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող թվով 14 ուսանողների, երկու և ավելի անչափահաս երեխա ունեցող թվով 3 ուսանողների, որի դիմաց Պատվիրատունը պարտավորվում է ուսանողական նպաստի տրամադրման ձևով իրականացնել ուսման վճարի փոխհատուցում (լրիվ կամ մասնակի (զեղչ)) :

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1 Սույն պայմանագրի գինը կազմում է 36 622 400 (երեսունվեց միլիոն վեց հարյուր քսաներկու հազար չորս հարյուր) ՀՀ դրամ, որից ուսանողական նպաստների ձևով, ուսման վարձի լրիվ փոխհատուցումը կազմում է 36 001 400 (երեսունվեց միլիոն մեկ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ, ընտանիքի անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող ուսանողների ուսման վարձի մասնակի փոխհատուցում՝ 487 000 (չորս հարյուր ութսունյոթ հազար) ՀՀ դրամը, երկու և ավելի անչափահաս երեխա ունեցող ուսանողների ուսման վարձի մասնակի փոխհատուցում՝ 134 000 (մեկ հարյուր երեսունչորս հազար)

2.2 Պատվիրատուն պարտավորությունները կատարելու դիմաց Պատվիրատունը պարտավորվում է ուսանողական նպաստի տրամադրման ձևով իրականացնել ուսման վճարի փոխտրամադրված միջոցները վճարում է Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

3. ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԾԱԽՍԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Կատարողը պետք է ապահովի սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված նպատակների իրականացումը:

3.2 Սույն պայմանագրի 2.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:

3.3 Կատարողը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

4. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1 Սույն պայմանագիրը գործում է մինչև 2022 թվականի դեկտեմբերի 20-ը:

4.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:

4.3 Սույն պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Արմավիրի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2	ք. Արմավիր, Արարատյան 7
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ ՖՆ գործառնական վարչության
Հ/Հ 900011005460	Հ/Հ 900338000491
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝	Տնօրենի պարտականությունները կատարող՝
_____ Վ. Գասպարյան	_____ Ա. Խաչատրյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ